

# ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ ՅԵՒՐՈՊԱ

— 348 —

(Տես յէջ 250)



ստուածաբանական ուսմանց  
տեսակի խորվ հայերէն լեզուի  
ուսման ետևէ եղաւ ուրիշ եկեղեց-  
ցական մը անդիխական եկեղեցւոյ,  
Դուրհամի եպիսկոպոսն Բ. Յովսէփ  
Լիգֆուտ (Joseph Barber Lighfoot, 1828-1890), և հրատարակեց երկա-  
սիրութիւն մի Աստքելական հարց վրայ,  
և առանձնաբար Սրբոյն իգեաւախոսի  
և Պողիկարպոսի, և տպագրեց ի  
Լոնդոն ի 1885 (Macmillan): Հայկա-  
կան թարգմանութիւն իգեաւախոսան  
թղթոց առ Եփեսացիս, Հռովմայե-  
ցիս, Զմիւռնացիս, առ Պողիկարպոս-  
դորս հայրապետ Վկայն Անտիքայ իր  
ի Հռովմ ճանապարհորդութեան ա-  
տեն գրած էր, և ուր կ'երթար գա-  
զանեաց ժանեզը մարտիրոսական պսա-  
կին արժանաւոր ըլլաու. արդէն տը-  
պագրուած էր ի 1849, ինչպէս յա-  
ռաջագոյն մեր այս գրուածին մէջ  
յիշատակած ենք, ի Գետերմանայ, մի  
և նոյն տարւոյն մէջ՝ յորում Ռվիչմ  
Գիւրըդոն տպագրեր էր իր իգեաւ-  
ախոն հաշարում (Corpus Ignatian-  
us) յոյն, լատին, ասորի լեզուներով և  
անդիխական թարգմանութեամբ (Լոն-  
դոն, առ Rivingtonոի): Այս թղթոց ո-  
մանց հարազատութիւնք գետ խնդրա-  
կան են:

Զենք ուզեր մանրամասն խօսիլ այն  
ամեն գրուածոց վրայ՝ որ Եղեսիոյ ե-  
կեղեցւոյն մկրնաւորութեան վրայօք  
հրատարակուած են: Սակայն արդէն  
յիշատակած ենք զհմուտ համառօտու-  
թիւն խնդրոյն ի մեծարդոյ Յ. Ճա-  
շեան հօրէ, վիեննական Մ'խիթարեա-

նէ, իր Արգարոց բուղբ (Zur Abgar-  
Sage) երկասիրութեամբ. յիշատակենք  
ասուէն վրայթի, ասորական լեզուի ու-  
սուցչի ի կամբրիճ, հրատարակու-  
թիւնն ասորի գրչագրաց՝ Ճառից Յա-  
կորայ Ափրաւատայ (Պարսիկ իմաստ-  
նոյն), զոր հինգերորդ գարու հայ  
թարգմանին մեծին Յակորայ արքե-  
պիսկոպոսին Մ'ծբնայ տեղ առաւ, և զոր  
(ազգական) կամ բարեկամ համարին  
ոմանք Մրրոյն Գրիգորի, Ծանօթ է  
մեր բանաէր ընթերցողաց որ ծիրաւ-  
նաւորն Նիկ. Մ. Անտոնէլլի, այս ճա-  
ռէն մեծ մասը հայ և լատին լե-  
զուով հրատարակեց ի Հռովմ (Opera  
S. Jacobi Nisibi) ի 1756. որ ապա  
կրկին տպագրութիւն ունեցաւ ի Վե-  
նետիկ ի 1765, ինչպէս նաև ի Մատե-  
նագրաւանի Գալլանդի (Bibl. Vet. Patr.  
ի Հատորն Ե, ի 1769): Հայ բնագիրն  
առանձին հրատարակուած է ի Կոս-  
տանընուպղիս ի 1824:

Յիշենք վերջապէս զհամարարբառ  
Ցատիհանոսի (Diatessaron), նախակարգ  
ուսումնասիրութիւն Ռունդէլ Հէրքիսի  
ի կլէր վարժարանէ ի կամբրիճ, ու-  
սուցիչ Սուրբ Գրոց մատենագրութեան  
ի Հառէրքորդ գպրոցի Բենիվա-  
նիոյ (London, C. G. Clay, 1890). Ներ-  
ածութիւն մ'է սուրբ աւեստարանաց  
համարբառին ի Ցատիհանոսէ, որոյ  
արաբական երկու գրչագիրը կը պա-  
հուին այսօր ի Հռովմ: (Տես Tatiani E-  
vangeliorum Harmonia in arabice, nunc  
primum ex duplice codice edidit et  
translatione donavit P. Augustinus  
Ciasca ord. S. Augustini, Bi-

blioth. Ap. Vat. scriptor. Romæ, 1888). **Արդէն** 1862ի Պաւղ Լագարդ եր Սոսքելական Սահմանադրութեանց գրուածքին մէջ ակնարկութիւն մը Կ'ընէր սրբոյն Եփրեմի ասորոյ հայկական թարգմանութեան, տպագրելց ի վենեսիկ ի չորս հատորու բայց ոչ ոք առանձին մտադրութիւն ըրաւ վրան, մինչև որ Ս. Վ. գերեան Հ. Մ'կրտչի թարգմանութիւնն՝ որ եղած էր ի 1841, հրատարակուեցաւ ի 1876, թարգմանչին մահուրնէն (1854) շատ ետքը Սալաբուրգի ուսուցիչ Գէորգ Միւսինգէր վարդապետին ձեռքով. Evangelii concordantis expositio facta a S. Ephræmo Doctore, in latinum translata a R. P. Joanne Baptista Aucher mechitarista, cuius versionem emendavit, adnotationibus illustravit et edidit Dr. Georgius Mösinger, prof. studii blibliici a. t. Salisburgi, Venetiis (S. Lazar) 1876, էջք ՃԲ-292, ընծայեալ յիշատակի հէորդայ արքեպիսկոպուի Հիւրմիւզ, հանգուցելց ի նըմին 1876 ամի ի 11 ապրիլի. Եփրեմի այս գրուածք մեկնութիւն մ'է Տատիանոսի Համաբարբառի կամ Համաձայնութեան աւետարանաց. հայկական թարգմանութիւնն եղեալ ի վրայ ասորականին ի միջոցի 864 կամ 373 ամաց, շատ հաւատարիմ է. որովհետեւ թարգմանչին իր լեզուին ոճոյ յատկութիւնը կը զո՞նէ ասորական սկզբնագրին համաձայն ընթանալու համար. Այս հրատարակութիւն մեծ ապէս նըպաստառը եղաւ Թէոդորի Ծահն հետազուութեանց ի վերայ պատմութեան կանոնի նոր կուակարաւինի, մասն Ա. Համաբարբառ Տատիանոսի, տպագրեալ յիշրանգէն 1888, էջ. 329, և մասն թ. 1883 էջք 286-299. Հառնապի քննադատութենէն ետք ալ ի գերման Պատմութիւն կանոնի նոր կուակարանի, Հատ. Ա. Երլանգէն, 1888, էջք 869 և հետեւեալք. Աստրական եկեղեցոյ սկզբնագիր նոր կուա-

կարան: Եփրեմի գրուածք հաւաքում մը կընայ համարուիլ գասախսական ծանօթաբանութեանց, զոր Գերմանացիք իրենց լեզուով սովոր են կոչել Collegienheft, և հեղինակին սուրբն Եփրեմ ըրած է յԵգեսիա բանախոսութեամբք, որոց ամենուն սկզբնաւորութեան յառաջադոյն ընդարձակ ընթերցում մը Կ'ըլլար գրոցն՝ որոյ մեկնութիւնը պիտի տրուէր, և ապա իր բանախօսութիւնն Կ'ընէր իմաստուն և աստուածախօս վարդապետն:

Աստուածաբաններէն անցնինք հայկական լեզուի ուսումը սիրողի մը (dilettante). Այն բազմաթիւ լեզուաց մէջ զրոյ Գէորգ Պորրոյ (1803-1881) սորվեցաւ, կը գտնուէր նաև հայերէնն: (Կենսագրութիւնն կրնան գտնել խընդուղութիւնը ի Dictionary of National Biography): Գրուածոց մէջ ի Savengro the Scholar, the Gypsy, the Priest; յերիս հատորս, (1854), գիւղագնը որ յաճախ նոյն իկն Պորրոյ կ'ենթադրուի յաճախ ակնարկութիւն կ'ընէ հայ լեզուի, և կը թուի վշտացընել իր հայրն երբ կ'ըսէ թէ սորվեր է այդ լեզուն՝ որ ծերունացն աշքին առջև անգուտ ուսում մը համարուած է:

Առանց յիշատակութեան շխողունք նաև զՃէՇՄՅ ԲԻԱՑ, Անդամ Մնդ զից խորհրդարանին և արքունական ուսուցիչ քաղաքական իրաւագիտութեան ի համալսարանին Օքսֆորդի, որ Հայաստան ճանապարհորդութիւն ըրաւ ի 1876, և վերելք մը ընելով յԱրարատ լեռն, ի գարձին հրատարակեց՝ ժողովրդական գարձած գրուածք մը որոյ խորագիրն է. Անդրկովկան և Արարատ (Transcaucasia and Ararat).

\* \*

1877 թուականին Ցեղեկագիր մը ներկայուեցաւ լոնդոնի բանախրական ընկերութեան՝ հայկական ուսմանց յառաջադիմութեան վրայ: Այս

գրուածքին հեղինակն, ինչպէս որ յառաջադոյն յիշատակեցինք, էր ուսուցիչն, Հիւրցմանն, և Սուլիս (Sweet) որ ի բացակայութեան նորա կարդաց այն գրուածք, իր ցաւը կը յայտնէր թէ ի՞նչպէս Անդղիոյ մէջ չեն երկցած երբէք հայագէտք: Բայց հիմա իմաստուն անդղիացի մը մեծ յոյս կուտայ կարեւոր արդեանց իր անխոնջ քննադատական ուսումնասիրութեամբ լեզուին Հայոց: Այս անձն է Փրեդերիկ կ. Լոնֆրիդ (Frederick C. Conybeare) որ ծնած է ի 1856 ամի, և նախնական ուսմանց ընթացքն ըրած ի Թընբրիճ դպրոցի և ապա ի համալսարանին Օքրովորդի, ի 1875-1881ին ուսուցիչ էր, և ի հետեւել ամին՝ խոկոյն բարձրացաւ պաշտամամբն ու պատուով (grade de maître-ès-arts). Մաքս Միկլէր անուանի արեւելագէտ ուսուցին անդրանիկ գտներ հետամուսնացաւ, ու անոր մահուընէն ետքը երկրորդ պըսակի անցաւ ջորէլլ օրիորդին, որոյ հետ երկու անդամ ճանապարհորդեց ի Հայս, ի 1888 և ի 1891: Ահաւասիկ ցուցակ մը եւեթ իր գրուածոցը՝ Նըկատմամբ հայերէն լեզուի և մատենագրութեան:

Փորձ հայերէն ընթերցուածոց (Specimen lectionum armenicarum) հատուածք Փիլոնի հերբայեցւոյ, նորոգապէս ի յոյս ընծայեալք ի Ռունդէլ Հարորիս անդղիացւոյ (G. Rundel Harris) տպ. յօքսփորդ ի 1889, էջ 15: Կը համեմատէ բաղդատութեամբ Փիլոնի քանի մի հատուածք ընդ հին հայկական թարգմանութեան:

2. Փիլոնի կորուսեալ գրուածոց վրայ, հատուած մը յAcademy ուսումնաթերթի (12 յուլիս, 1892, էջը 32).

3. Պղատոնի գրուածոց հին հայկական թարգմանութեանց վրայ յուսումնաթերթն Classical Review, Հատ. Գ. թիւ 8 (հոկտ. 1889, էջս 340-343...)

4. Համեմատութիւն Արհատուելի

քանի մի գրուածոց յոյն բնագրին՝ ընդ հին հայկական թարգմանութեան, ընտիր և բազմավաստակ գրութիւն ընդարձակ և հմուտ յառաջաբանով: Գրքին բուն խորագիրնէ. Anecdota Oxoniensia. Texts, documents and extracts chiefly from Manuscripts in the Bodleian and other Oxford librairies. — Classical Series. Vol. 1. Part VI. A collation with the ancient Armenian Versions of the Greek text of Aristotle's Categories, De Interpretatione, De Mundo, De Virtutibus et Vitiis, and of Porphyry's Introduction. Oxford, at the Clarendon press, 1890: Անդղիական հմտութեամբ կը ճառէ իր առաջարկութեան և նիւթոյն վրայ, և որոյ հայկական կրկին թարգմանութիւնք հրատարակեցան յագայոյին հանդէս և առանձինն, և ծանօթ են արգէն մեր ընթերցողաց:

5. Անդղիական թարգմանութիւնն ըր ի հայկական հին թարգմանութեանէ Անկիրիոյ ժողովոյն կանոնաց (ի կանոնագրոց), նախարան ծանօթութեամբ, յաւելեալ ի հատուածն Մ. Բ. Ռակհամ (Rackham) ի տպելոյ յԱստուածաբանական և յԵկեղեցական ուսումնասիրութիւնս (Studia Biblica et Ecclesiastica) որ կը հրատարակուի յօքսփորդ:

6. Հայատան և Հայք, յեռեալ յԱզգային հանդէսն (National Review), նոյեմբեր 1889: Նկարագրութիւն մ'է ուղետորութեանն զոր կոնիրիլ ըրաւի Հայաստան ի 1888:

7. Պարսիկ տարը ի մարկիոնականորեան, յուսումնաթերթն Academy, 11 ապրիլ 1891. յորում յօդուածագիրն վրիսակաւ կը համարի կարծել՝ թէ առ Եզնրկայ գտնուած աշդարբանն նոյն է ընդ զենդ ադար փոխագրութեան: Այս ենթագրութիւնը յետոյ ուրիշ հատուածով մը ետ առած է:

8. Ի վերայ հատուածոց ինչ պրայն հերոնիմոնէ առաջ եղած Աստուածա-

շոնչ գրոց լատին թարգմանութեան մը : 1894 տարւոյն Expositor ուսումնաթերթին մէջ հրատարակուեցաւ այս գրուած : Յառաջաբանին մէջ կոնիքիր կը խօսի Հ. Մ. Աւգերեան աշխատասիրութեան վրայ, յորում այս հատուածներն սրբոյն Ամբրոսիոսի գրուածներէն առնըլով, միացուց յիւրում լատին թարգմանութեան ֆիլոնի ինդրոց՝ հրատարակելոց ի 1822 : Միաք ունի կոնիքիր Եօթանասնից ընթերցուածոց տարրերութիւնքն հրատարակել ըստ հին հայկական թարգմանութեան ֆիլոնի ինդրոց ի գիրս ծննդոց :

Ասոնցմէ զատ ուրիշ հատուածներ ալ հրատարակած է կոնիքիր և կը շարունակէ հրատարակել, որոց համար մեծապէս երախտագիտութիւն պարտի նման հայ մատենագրութիւնն, ուր այդպիսի փութով ետևէ կ'ըլլայ անոր զարգացման և ծանօթութեան յԱնդղիա : Իրմով կընայինք փակել զակաւաւոր թիւ անդղիացի հայագիտաց, եթէ մօտերս ծանօթացած չըլլայինք եր-

կու անդպիացոց, իրենց եկեղեցական դասէն, որ եկան ի քաջարու 1893 տարւոյն յուլիսին կատարելագործելու իրենց արդի սկսած և յառաջ տարած հայկական լեզուի ուսումը : Ասոնցմէ մէկն է Արմենուած Ռոբինսոնն և երկրորդն Ա. Բրուկկ . Կամբրիճի համարանին վարդապետք . որոց առաջինն հրատարակած է Արիստիդէս իմաստասիրին չատագովականն ամբողջ, հայ՝ ասորի և յոյն ընագրովը և թարգմանութեամբք և բազմահմուտ տեսութեամբ՝ ինչպէս արդէն ծանօթեն ամսագրիս ընթերցողք . և բաց ուրիշ նմանօթինակ եկեղեցական հնութենեն ինչուան առ մեր հասած անվաւեր (apocryphe) գրութեանց հրատարակութիւններէ, կը զբաղի հիմա ցատիանոսի . ամ սրբոյն Եփրեմի Համարարբասին քննագատական երկասիրութեամբ . զիտեն ընթերցողք որ քանի մը տարիէ ի վեր հայկական լեզուի աթոռ մը հաստատուած է ի թագառորական դպրոցի (King's College) Լոնդոնյի .

(Ծարայարելի)



## ՀԱՅՔ ԵՒ ՂԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 258)



ւստի հաւաքելով ցարդ ըսածնին՝ Բնիկ-Արիականաց (Հայոց) առաջին պաշտամունքն եղած են : Ա. Ա. Ա. ՊԵՐԵԳ. — Անիկութական էութիւն, համացօր ԳՈԼ և ի որոյ անուան համար ոչ նուիրական տաճարը և ոչ դասր Քահանայից, ոչ պաշտամանց եղանակը, և ոչ անդրիք . ուխաք և սրտի պատարագք անսահման կարգօք և վայրիւ կը մատուցուէին :

Բ. ՀՈՒՐ Ասուուած, Միհր . — Անիկութական զօրութիւն Ալեքփի, պաշտօն ընդունած առհասարակ յԱրեաց, թէ և զանազան աստիճանաւ . և կարգաւ : « Հուր Ասուուած » անունն գեռ եւ ՚ի մեզ կենդանի է : ԱԸՆ-րական տօնն իրանեան և Արիական աշխարհի առաջնակարգ հանգէսներէն էր . 20,000 հայկական գեղեցկագոյն նժոյգ հիեր այդ տօնական համախմբութեանց կը նուիրուէին Հայոց աշխարհէն, ըստ վկայութեան բանոփոնի, բարձր Հայոց Դիբրիան գաւառի